1772

ՏԱՐԵՒՈՐ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՆՐԱԿԱՆ ԱՏԵՆԻՆ ՅԱՆՁԱՆՁԱՆԱՑ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ

# ԲԱՏԱՒԻՈՅ

Վ.Ա.Ս.Ն 1904 Ա.Մ.Ի

ՆՈՐ—ՋՈՒՂԱ.

Տպարան Ս. Ամենափրկիչ Վանուց

1905

12666

# ՏԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հանրական Ատենին Յանձանձանաց Հայ Ժողովրդոց ի Ջավա, վասն 1904 ամի, ընթերցեալ առաջի Հանրական ժողովոյ գումարեալ ի սրահի շինուածոյ Սուրբ Յովհաննու Եկեղեցւոյ ի Բթավիա, ի 16 Ապրիլ ամսոյ 1905 ամի:

*Մեծարոյ Պարոնայք Ժողովոյ՝*

Ըստ Պայմանի Սահմանադրութեան և Կարգադրութեան Ազգային, ահա Ատեան մեր խնդրէ յայտ առնել Արգոյ Ժողովոյդ զանցս տարւոյն անցելոյ, և տալ համար զՅանձանձանաց ներքին Ազգային Հաստատութեանց մեր աստ, որոց վերաբերեալ Մատեանք և Հաշիւք, Թուղթք և Թղթակցութիւնք գտանին ի վերայ գրասեղանի առաջի Ժողովոյդ։

## ՀԱՆՐԱԿԱՆ ԱՏԵԱՆ ՅԱՆՁԱՆՁԱՆԱՑ

Ի վերջին Հանրական ժողովի, որ տեղի կալաւ յ՚8 Մէյ 1904 ամի, բոլոր Անդամք հին Ատենին կրկին ընտրեցան վասն երկրամեայ պաշտօնավարութեան, և ի նորոյ Ատեան մեր կազմեցաւ այսպէս։

| | |
|---|---|
| պ. Գ. Տէր Գալստան, | Նախագահ |
| պ. Գ. Մ Տէր Յովհաննէս, | Ատենադպիր |
| պ. Ս. Ա. Ստեփաննոս, | Գանձապետ |
| պ. Դ. Մելքում<br>պ. Մ. Զօրաբ | Խորհրդատուք |

Վարչութիւն մեր ունեցաւ կանոնաւոր ժողովս, ուր ամենայն խնդիրք և գործառնութիւնք վերաբերեալ Հաստատութեանց մեր զկնի խորհրդակցութեան որոշումն ստացան և կատարեցան։

## ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵԿԵՂԵՑԻ

Ուրախութիւն է Վարչութեան մեր յայտնել թէ Արժանապատիւ Սրբակրօն Տ. Անդրէաս վիճակաւոր քահանայն մեր, որ ի վերջ 1903 ամի անցելոյ ժամանեցաւ աստ բարեպէս կատարէ ի բաւարարութիւն բոլորից մեր աստ, զպաշտօնավարութիւն հոգևոր մատակարարութեան Սուրբ եկեղեցւոյ մեր։

Շինուածք և կալուած եկեղեցւոյ գտանին ի բարւոք կացու-

թեան, և վերջինն մնայ չարունակ ի վարձու, այլ բաւականին ծախս պահանջէ վասն նորոգութեանց։

## ՄԱՆՈՒԿ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Որպէս ի վերջին տեղեկագրի մեր յիշողութիւն եղև, ուրախ եմք յայտնել յաջողեցաւ. Ատենին մեր ժամանակին հոգալ վասն արժանաւոր հայ ուսուցչի միոյ վասն քաղաքիս ի Ջուղայոյ միջնորդութեամբ Սրբակրօն Տէր Վարդան Նախորդ վիճակաւոր քահանայի մերոյ, այն է՝ պ. Կ. Վ. Յակոբեան, որ մտեալ ի պաշտօն, ուրախ եմք վկայել, բաւարարական և տեսանելի առաջադիմութեամբ ուսուցանէ զհայ լեզուն բոլոր հայ մանկանց տեղւոյս։

Ատեան մեր ստացաւ յընթացս տարւոյն խնդիր օգնականութեան ի Ջուղայեցի հայ երիտասարդէ միոյ ի Հնդիկս, որ արժանի համարէ յայտնել ժողովոյդ։ Յիշեալ երիտասարդն Յարութիւն Բարսեղ անուամբ, յայտնեաց անկարողութիւն իւր այլ ևս չարունակել հոգալ վասն ծախուց բժշկական ուսմանց իւրոց, յորում ջանիւք իւր արդէն բաւականին վաստակեալ և առաջացեալ էր ի բժշկական դպրոցի միոյ ի Միրաջ։ Զկնի հարկաւոր թղթակցութեան և գտանելոյ վկայականս և ապացոյցս հաստատութեանց և արժանաւորութեան, Ատեան մեր պատեհ համարեաց ընդունել խնդիր նորա, և մասնաւոր օգնական կալ նմա, մինչ յաջողեսցի անցանել զքննութիւն բժշկականութեան, որոյ տեւումն իբր երեք ամք լիցի։ Փոխարէն սոյն օգնականութեան գտանք գրաւոր խոստումն նորին, զկնի յաջողման քննութեան՝ իսկոյն եկանել առ Ջուղա, և պիտոյացուցանել բժշկական արհեստ իւր յօգուտ մերազանց անդ և ի գիւղօրայս նորին։

Որպէս երևայ ի հաշիւ ելևմտից Հաստատութեանս. յընթացս տարւոյն Գ. 6656 լի. ծախեցաւ վասն ուսման մերազգեայ մանկանց ի Ջաւա, Կալկաթա, Ջուղա և յայլ ուրեք, որոյ մեծամասն ի Մարդասիրական Ճեմարանի ի Կալկաթա, ուր 16 չքաւոր Ջուղայեցի մանկունք չարունակ ուսանին, կերակրին և զգեստաւորին արդեամբ սոյն Հաստատութեան մեր։

Տխուր եմք յայտնել, թէ մի ի կալուածոց Հաստատութեանս, այն է՝ տունն ի Գանգ Սկօտ փողոցի համայն ամի 1904 դատարկ մնաց ի վարձակալէ, և տունն ի Տանաբանգ, ըստ ճարտարապետին, կարօտ է մեծածախս նորոգութեանց, այն է՝ խանգարեալ յարկն փոխելոյ և նոր յատակ գձելոյ Սմէնտ և մարմարեայ քարից, որոց ծախք իբր Գ. 10000 լի. գոլով, Վարչութիւն մեր բարւոք համարէ յայտնել



ժողովոյդ և գտանել ընդունելութիւն։

Ատեան մեր յանցեալ տարւոջ ուղղեաց խնդրաթուղթ մի առ Տեղական Կառավարութիւն քաղաքիս վասն պակասացուցանելոյ զգետնահարկ մթերանոցացս վերաբերեալ Հաստատութեանս ի Կալե Բազար, որ արտաքոյ կարգի յաւել է քան իրական արժէք նոցին։

## ՀԱՅԿԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Տուրք Հաստատութեանս առ ազգային չքաւորս մեր ի Ջավա, յընթացս տարւոյն եղև միայն Գ. 1500 իբր Դ. 270 լի. պակաս քան ամին անցելոյ։ Երկոքին կալուածք նորին չարունակ ի վարձու մնացին առանց մեծածախս նորոգութեանց։

## ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ ՆՈՐ–ՋՈՒՂԱՅՈՒ

Յընթացս տարւոյն անցելոյ չեղև փոփոխութիւն ինչ յատագուածս վեր" երկոտասան Ուսումնական, Կրօնական և Մարդասիրական Հաստատութեանց արժանի յիշատակութեան։

Եկամուտ նորին վասն տարւոյն ընդ համայն բովանդակեցաւ Գ. 4870—66, յորմէ Գ. 3540—90 լի. յանցեալ փէվրէր ամսոյ փոխանցաւ առ Ջուղա ի հաշիւ զանազան Հաստատութեանց որպէս ի ստորև և մնացեալն Գ.1329—76 բարդեցաւ ի վերայ դրամագլխոց վերաբերեալ Հաստատութեանց։

| | | |
|---|---|---|
| Գանձանակ Աղքատաց | Գ. | 1023— |
| Կեդր. Երկսեռ Դպրոցաց | » | 818— |
| Ս. Ամենափրկչեան Վանաց | » | 623—40 |
| Ս. Մինաս Եկեղեցւոյ | » | 341— |
| Ս. Կատարինէ Դպրոցի | » | 279— |
| Ս. Յովհաննու Եկեղեցւոյ | » | 217— |
| Ս. Ամենափրկիչ Տպարանի | » | 139—50 |
| Ս. Պօղոս Դպրոցի Սանդիբարանի | » | 100— |
| Գումար փոխանցեալ որպէս վերն | Գ. | 3540—90 |

Զգոլով այլ ինչ արժանի յիշատակութեան կցորդեմք զհամառօտ համար ելևմտից և գլխոց մանրահաշուոց երեքին Հաստատութեանց մեր փակեալ ցվերջ Դեկտեմբեր ամսոյ 1904 ամի. յորում ունիք նշմարել մեծագումար պակասումն դրամագլխոց և գնոց անշարժ կալուածոց նոցին ըստ որոշման 41 երրորդ Հանրական ժողովի մեր, որ տեղի կալաւ առ յ'8 Մէյ տարւոյն անցելոյ։

### Կարճառօտ համար Ել-եւ-մտից Ս. Յովհաննու Եկեղեցւոյ վասն 1904 ամի

**ՄՈՒՏՔ**

| | | |
|---|---|---|
| *Վարձ միամեայ կալուածոց նորին ի դաշտն արքունի* | Գ. 3300— | |
| *Շահաբաժին 2 հատ Ջաւա Բանքի Շէրաց* | » 93— | |
| *Տոկոսի հաշւոյ մնացորդին* | » 130–41 | |
| | Գ. 3523—41 | |

**ԵԼՔ**

| | | |
|---|---|---|
| *Գետնահարկ և Ապահովութիւն հրկիզութեան . . . . .* | Գ. 237—60 | |
| *Նորոգութեանց կալուածոց . .* | » 361—23 | |
| *Թոշակ քահանայի և վարձ ծառայից եայլն* | » 2410— | |
| *Բաց գրեալ ի գնոյ կահ և կարասեաց* | » 499— | » 3507—83 |
| *Առաւելեալ եկամուտ տարւոյն* | | Գ. 15—58 |

*Ըստ որոշման* 41 *երորդ Հանրական ժողովոյ* 1904 *ամի* Գ. 12000 *լի. ի բաց գրեցաւ ի դրամագլխոյ Հաստատութեանս, ընդդէմ ի նորոյ գնահատութեան անշարժ կալուածոց նորին։*

---

### Կարճառօտ համար Ել-եւ-մտից Մ. եւ Ց. Ուսումնարանի վասն 1904 ամի

**ՄՈՒՏՔ**

| | |
|---|---|
| *Վարձ միամեայ անշարժ կալուածոց նորին .* | Գ. 6700— |
| *Շահաբաժին 60 հատ Ջաւա Բանք շէրաց .* | » 2790— |
| *Տոկոս տարւոյն աւանդի դրամոց և այլն .* | » 480—16 |
| | Գ. 9970—16 |

**ԵԼՔ**

| | | |
|---|---|---|
| *Ծախք Նորոգութ. կալուածոց* | Գ. 1038—25 | |
| *Գետնահարկ և հրկիզութեան ապահովութեան և այլն* | » 997—50 | |
| *Ատենադպրութեան և համարակալութեան* | » 600— | |
| *Մանր ծախք, գին վիճակահանութեան Ջուղայու եւն* | » 131—63 | Գ. 2767—38 |
| *Ծախք ուսման 16 մանկանց ի Մ. Ճ. ի Կալկաթա* | Գ. 3942— | |
| *եւ ի Ջաւա* | » 1232—50 | Գ. 5174—50 |
| Փոխադրելի | | Գ. 7941—88 |



| | | | |
|---|---|---|---|
| Փոխադրեալ | | Գ. 7941—88 | Գ. 9970—16 |
| *Ծախք ուսման ի Լոնդոն* | » 578—40 | | |
| *Նուէր Կեդր. Երկսեռ Դպրոցաց Ջուղայու* | » 900— | | |
| *Եւս Պատրիարքին Երուսաղէմայ* | » 121—38 | | |
| *Եւս Ն. Ջուղայու Հայուհեաց Բարեգործ. Ընկերութ.* | » 121—50 | | |
| *Եւս Ամենափ. Տպարանին և Ջուղայի Լրաբերին* | » 120—75 | | |
| *Եւս Գարպատեց. Որբանոցին* | » 60— | Գ. 9848—91 | |
| *Ի բաց գրեալ գնոց գրքատան և անեղինաց* | » 808—10 | | |
| *Եւս 60 հատ Ջ. Բանք Շէրաց* | » 141—32 | » 949—42 | » 10793—33 |
| *Պակասեալ մուտք տարւոյն* | | | Գ. 823—17 |

*Ըստ որոշման* 41 *երորդ Հանրական ժողովոյ* 1904 *ամի* Գ. 81800 *լի. ի բաց գրեցաւ ի դրամագլխոյ Հաստատութեանս ընդդէմ ի նորոյ գնահատութեան անշարժ կալուածոց նորին։*

---

### Կարճառօտ համար Ել-եւ-մտից Հայկեան Միաբանութեան վասն 1904 ամի

**ՄՈՒՏՔ**

| | |
|---|---|
| *Վարձ միամեայ երկուքին կալուածոց նորին* | Գ. 2280— |
| *Շահաբաժին մի հատ Ջաւա Բանք Շէյրի .* | » 46—50 |
| | Գ. 2326—50 |

**ԵԼՔ**

| | | |
|---|---|---|
| *Ծախք Նորոգութեան կալուածոց* | Գ. 170— 2 | |
| *Գետնահարկ և ապահովութիւն հրրկիզութեան . . .* | » 289—20 | |
| *Տուրք առ հայազգ կարօտեալս ի Ջաւա* | » 1500— | |
| *Ի բաց գրեալ գնոյ անեղինաց .* | » 49— | |
| *եւ եւ Ջաւա Բանք Շէյրի* | » 18—31 | » 2026—53 |
| *Առաւելեալ մուտք տարւոյն* | | Գ. 299–97 |

*Ըստ որոշման* 41 *երորդ հանրական ժողովի* 1904 *ամի* Գ. 17500 *լի. ի բաց գրեցաւ ի դրամագլխոյ Հաստատութեանս, ընդդէմ ի նորոյ գնահատութեան անշարժ կալուածոց նորին։*

## Կշիռ Մայրահաշւոյ Ս. Յովհաննու Եկեղեցւոյ վասն Դիզէմբր ամսոյ 1904 ամի։

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առ Տուն ի Կօնինգսալլէյն . | | | Գ. 40000 | |
| » Շինուածք եկեղեցւոյ . | | | » 28000 | |
| » Զարտորտ բանք (Աւանդի) . | | | » 7500 | |
| » Անօթեղէնք եկեղեցւոյ . | | | » 2000 | |
| » Շէյրք Ջավա Բանքի 2 հատ . | | | » 1800 | |
| » Մ. և Ց. ուսումնարան . | | | » 1000 | |
| » Կահ և կարասիք . . | | | » 1 | |
| » Սանդուղն . . . | | | » 397 | 67 |
| | | | Գ. 80698 | 67 |
| **Ապահովութիւնք Հաստատութեանց Ջուղայու** | | | | |
| Առ Մթերանոց ի Կալի Բասար յանուն Ս. Ամենափրկիչ Վանաց | Գ. 13000 | | | |
| » Շէյրք Ջիլենք. 8 հատ Ամեն. Վանաց | » 7200 | | | |
| » Նոյն 22 հատ Արկղն Աղքատաց | » 19800 | | | |
| » Նոյն 11 » Ս. Մինաս Եկեղ. | » 9900 | | | |
| » Նոյն 10 » Հասարկւթ. Ջուղ. | » 9000 | | | |
| » Նոյն 7 » Կենդր. Դպրոցաց | » 6300 | | | |
| » Նոյն 7 » Ս. Յվհննու Եկեղ. | » 6300 | | | |
| » Նոյն 7 » Հոգևորկն. Դպրոց | » 6200 | | | |
| » Նոյն 4 » Ս. Ստփննս. Եկեղ. | » 3600 | | | |
| » Նոյն 7 » Ս. Պօղոս Դպրց | » 6200 | | | |
| » Նոյն 4 » Ս. Գրիգոր Եկեղ. | » 3600 | | | |
| » Նոյն 3 » Ամենփ. Տպարն | » 2700 | | | |
| » Նոյն 1 » Ս. Կտրինէ Դպրոց | » 900 | | | |
| » Նոյն 1 » Ս. Գէորգ Եկեղ. | » 900 | | » 95600 | |
| | | | Գ. 176298 | 67 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ստացուածք եկեղեցւոյ | | | Գ. 72069 | 65 |
| Գանձանակ գրաւոր աշխատանաց | | | 938 | 21 |
| | | | Գ. 73007 | 86 |
| **Ստացուածք Հաստատութեանց Ջուղայու** | | | | |
| Ամենափրկիչ Սուրբ Վանքն | Գ. 20823 | 40 | | |
| Արկղն կամ Գանձանակ Աղքատաց | » 20823 | | | |
| Հոգևորական Դպրոց | » 11372 | 79 | | |
| Ս. Մինաս Եկեղեցի | » 10241 | | | |
| Կենդրոնական Դպրոց | » 7118 | | | |
| Ս. Պօղոս Դպրոց Սանդիրարանի | » 6561 | 72 | | |
| Ս. Յովհաննու Եկեղեցի | » 6517 | | | |
| Ս. Կատարինէ Օրիորդաց Դպրոց | » 5679 | | | |
| Ս. Ստեփաննոս Եկեղեցի | » 3995 | 96 | | |
| Ս. Գրիգոր Եկեղեցի | » 3848 | | | |
| Ամենափրկչեան Տպարան | » 2839 | 50 | | |
| Կտակ. Հանգ. Թադդէոս Արքեպիսկոպոսի | » 2509 | 44 | | |
| Ս. Գէորգ Եկեղեցի | » 962 | | Գ. 103290 | 81 |
| | | | Գ. 176298 | 67 |

## Կշիռ Մայրահաշւոյ Մանուկ և Յարութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Առ Մթերանոցք ի Կալի Բազար . . | Գ. | 45000 | |
| » Տուն ի Տանարանդ . . . | » | 24000 | |
| » Տուն ի Գանդ Սկօտ . . . | » | 12000 | |
| » Շէրք Ջավարանքի (60 հատ) . . | » | 53000 | |
| » Ջարտրտ Բանք (Աւանդի) . . | » | 8000 | |
| » Գրաւական տան միոյ Բթավլիա . . | » | 6000 | |
| » Գրքատուն և տնեղէն . . . | » | 2 | |
| » Սանդուղն . . . . . | » | 104 | 27 |
| | Գ. | 148106 | 27 |

## Կշիռ Մայրահաշւոյ Հայկեան

| | | | |
|---|---|---|---|
| Առ Տուն ի Բրօն Սիրի . . . | Գ. | 15000 | |
| » Մթերանոց ի Կալի Բազար . . | » | 7000 | |
| » Շէյր Ջավա Բանքի 1 հատ . . | » | 850 | |
| » Տնեղէն . . . . . | » | 1 | |
| » Սան դուղն . . . . . | » | 858 | 83 |
| | Գ. | 23709 | 83 |

Գ. Տէր Գալստանեան

Ս. Ա. Ստեփաննոսեան

Գ. Մելքումեան

Մ. Ջօրաբեան



## Ուսումնարանի վասն Դիզէմբր ամսոյ 1904 ամի

| | | | |
|---|---|---|---|
| Ի Ստացուածս . . . . . | Գ. | 147106 | 27 |
| » Ս. Յովհաննու եկեղեցի . . . | » | 1000 | |
| | Գ. | 148106 | 27 |

## Միաբանութեան վասն Դիզէմբր ամսոյ 1904 ամի։

| | | | |
|---|---|---|---|
| Ի Ստացուածս . . . . | Գ. | 23709 | 83 |
| | Գ. | 23709 | 83 |

Բրայլիա 16 ապրիլ 1905

Նախագահ

Գանձապետ — Գ. Մ. Յովհաննէս

Խորհրդատու — Ատենադպիր Կառ.

»

## ՀԱՆՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՈՒԵՐՈՐԴ

*Ըստ յայտարարութեան Շրջաբերականի վարչութեան Ատենին Ցանձանձանաց ժողովրդոց Հայոց ի Ջաւա թուագրեալ ի 14 Մարտ ամսոյ անցելոյ, և հրատարակութեան ի նոյն թարեղ «Ջավօ Կօռանտ» լրաթղթի Տէրութեան, գումարեցաւ Հանրական ժողով մերազանց ի 16 Ապրիլի 1905 ամի, յաւուր Կիւրակէի ի 10 ժամու առաւօտեան, ի Սրահի ժամատան մեր, ուր ներկայ էին Սրբակրօն Տէր Անդրէաս Գ. Արգարեան, վեհակաւոր քահանայն մեր, Պարոնայք Գ. Տէր Գալստան, Դ. Մէլքում, Ս. Ա. Ստեփաննոս, Գ. Մ. Տէր Յովհաննէս, Յովհաննէս Ն. Տէր Գալստան, Յովհաննէս Կ. Սարգիս, Կ. Վ. Յակոբ և Հ. Դ. Անտօն։*

*Նախագահ Ատենին պարոն Գ. Տէր Գալստան կալաւ զաթոռ ժողովոյն։*

*Ընթերցաւ թուղթ մի առացեալ ի հասարակութենէ մերազանց ի Սմարանդ, ի պատասխանի թղթոյ Ատենին, յորում կարգեն Պրն. Ս. Ա. Ստեփաննոս առտ լինել երեսփոխան իւրեանց ի ժողովի. այլ ի հասարակութենէ մերազանց ի Սուրբայիա տխուր եմք չառացաք պատասխանի թղթոյ մեր։*

*Ատենադպիր կառավարիչ Ատենին ընթերցաւ առաջի ժողովոյն զՏարեւոր տեղեկագիրն վասն 1904 ամի. ընդ համառօտ համարոց ել և մուտից, և կշռոց Մայրահաչեաց երեքին հաստատութեանց մեր, որք և կալան զհաւանութիւն ժողովոյն։*

*Ապա Նախագահ Ատենին յառաջ բերեաց զխնդիր մեծածախս նորոգութեանց տանն Մ. և Ց. Ուսումնարանի, զորմէ յիշողութիւն եղև ի տարեոր տեղեկագրին, և համաձայն հաւանութեամբ ժողովոյն ընդունելի եղև տալ կատարել զբոլոր նորոգութիւնս, որք հարկաւոր իցեն։*

*Առաջարկեցաւ ի պարոն Յովհաննէս Կ. Սարգսեանէ, որում և երկրորդեաց պարոն Ս. Ա. Ստեփաննոսեան և հաւանելի եղև համայն ժողովոյն, այսու պատեհութեամբ խորին շնորհակալութիւն ժողովոյն յայտնել առ Գերապատիւ Բագրատ Վարդապետ Վարդազարեան ի Ջուղա, վասն ազգասէր և անձնանուէր վաստակոց նորին յօգուտ ազգին մեր։*



*Առաջարկութեամբ Սրբակրօն Տէր Անդրէաս քահանայի, որում երկրորդեաց պարոն Յովհաննէս Ն. Տէր Գալստանեան, հաւանելի եղև ժողովոյն մատուցանել շնորհակալութիւն Արգոյ Նախագահին և Անդամոց Ատենին և փակեցաւ ժողովն։*

Աթոռակալ
Գ. Տէր Գալստանեան

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011243